

Ապահովագրական ընկերությունների գործարար շրջանառության սովորույթը՝ կապված ապահովագրական պայմանագրի «լիազորված վարորդներ» ցուցակի հետ



Համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի (հոդված 14, 3-րդ կետ)՝ Հաշտարարը որոշում կայացնելիս հաշվի է առնում ոչ միայն ՀՀ օրենսդրության պահանջները, այլև գործարար վարքագծի և էթիկայի կանոնները, գործարար շրջանառության սովորույթները: Հայաստանի ֆինանսավարկային կազմակերպությունների խորհրդատվական կենտրոնի կողմից Հաշտարարին ուղղվել են մի շարք հարցեր, որոնց մի մասին պատասխանելու համար, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում գործարար շրջանառության սովորույթը կիրառելու նպատակով Հաշտարարը նպատակահարմար է գտել ապահովագրական ընկերություններից ճշտել տվյալ հարցի վերաբերյալ համակարգում գործող գործարար շրջանառության սովորույթը: Համաձայն ներկայացված պահանջի՝ ավտոմեքենայի գրավադրմամբ վարկ վերցնելու նպատակով Հաճախորդի և ապահովագրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև կնքվել է ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրության պայմանագիր, որով ավտոմեքենան ապահովագրել է կորստից և վնասվածքի ռիսկերից: Մեքենան ապահովագրելիս Հաճախորդն ունեցել է վավեր վարորդական վկայական: Ըստ Հաճախորդի, ապահովագրության պայմանագրի կնքման պահին նրան տեղեկացրել են, որ պայմանագրում պետք է նշվեն այն անձինք, ովքեր, իրենից բացի, վարելու են ավտոմեքենան, որին ի պատասխան Հաճախորդը տեղեկացրել է, որ ավտոմեքենան երբեմն վարելու է նաև այլ անձ, ում անունը նշվել է ապահովագրության պայմանագրում, որպես լիազորված վարորդ: Պայմանագրի գործողության ժամանակ Հաճախորդն իր մեքենայով ենթարկվել է վթարի, որի հետևանքով մեքենային պատճառվել է գույքային վնաս: Հաճախորդն ապահովագրական հատուցում ստանալու համար դիմում է ներկայացրել Ընկերություն: Ընկերությունը մերժել է ապահովագրական հատուցում տրամադրել այն հիմնավորմամբ, որ Հաճախորդն ընդգրկված չի եղել լիազորված վարորդների ցուցակում: Հաճախորդը նշել է, որ «Լիազորված վարորդների» ցուցակում իրեն ընդգրկելը կնշանակի, որ ապահովագրիրը/ավտոմեքենայի

սեփականատերը պետք է լիազորի ինքն իրեն, որպեսզի կարողնա վարել ապահովագրված մեքենան:

Պահանջի քննությունն իրականացնելու համար Ֆինանսական համակարգի հաշտարարին անհրաժեշտ էր պարզել ձևավորված սովորույթը և որոշել՝ թե ինչպես է ապահովագրական ընկերություններում կարգավորվում վերոնշյալ խնդիրը: Այլ կերպ ասած, երբ ապահովադիրն ունի վարորդական վկայական, հանդիսանում է վարկառու և տ/մ-ի սեփականատեր, արդյոք պետք է նա ընդգրկվի «Լիազորված վարորդների» ցուցակում, թե՛ ոչ: Այդ նպատակով Հաշտարարը խնդրել է ներկայացնել, թե ինչպիսին է ընկերությունների մեկնաբանությունը (գործելաոճը) նմանատիպ դեպքերում:

Հարցի կապակցությամբ Հաշտարարի գրասենյակը ստացել է ՀՀ-ում գործող չորս ապահովագրական Ընկերությունների կողմից տրված բացատրություններն ու պարզաբանումները, որոնց ուսումնասիրությունը հանգել է հետևյալին. ԿԱՍԿՈ վկայագրով որպես օբյեկտ նշված տրանսպորտային միջոցը վարելու օրինական հիմք և համապատասխան կարգի վարորդական իրավունք ունենալը դեռևս բավարար չէ վկայագրով լիազորված վարորդ հանդիսանալու համար: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է, որպեսզի տվյալ անձը՝ որպես լիազորված վարորդ, նշված լինի վկայագրում՝ «Լիազորված վարորդներ» ցուցակում: